## 66. ՁԱՐԽԻ ՄԵՋ ՆՍՏՈՂ ՏՂԵՆ

Կէղնի, չէղնի, թաքավորմ կէղնի։ Էդ թաքավորի երես բնավ ծաղր չիգեր։ Օր մի ուր լալին ասաց.—Գնա ընծի հըմալ բանմ՝ բի, օր ես տեսնամ, ծըծղամ։

Լալեն էլ մտածեց, ըսեց՝ «Ես ի՞նչ բան բերեմ օր էդա մարթ տեսնա, ծըծղա»։

Հ՝ելավ ընկավ ճամփախ, գնաց։ Գնաց, ռաստ էկավ ըխտիյար մարթում մը, բարև տվին իրար ու նստան։

Ըխտիյար մարթն հարցուց էտորնե.—Դու հ՝ուստի՞ց կուգաս։

Լալեն ասաց.—Ես ֆըլան թաքավորի լալեն եմ, թաքավորի խեչեն կիգամ։

Ըխտիյարն ասեց.— Հ՝որի՞ն ես ընկի սար ու ծոր։

Լալեն ըսեց.—Իմ թաքավոր իմ վրեն դրեր է, օր բանմ՝ գտնամ առնիմ էրթամ ուրին, ծըծղա. հար էս օր ուր ումրի մեջ չը ծըծղացեր է, կուղե օր էս դախ ծըծղա։

Ըխտիյարն ըսավ լալեն.—Լալա՛, հոգ մըներ, դու թող դնա քու տուն, ես հ՝իրկուն քու հ՝ուզած կառնիմ կիգամ, ի՛նչ խրտար կուզե թաքավոր, թըղ ծըծղա։

Լալեն թողուց էկավ ուր տուն. քիչմ՝ մնաց, հ՝ելավ գնաց թաքավորի տիվան։ Թաքավոր տեսավ, հարցուց, ըսեց.—Լալա՛, ի՞նչ շուտ տառցար էկար, իմ հ՝ուզածն բերեցի՞ր։

Լալեն ասաց.—Քիչմ՝ համբերե, կէղնի։

Մանցին մինչև հ՝իրկուն։ Թաքավոր հարցուց լալից.—Լա՛լա, դու կըսեր հ՝իրկուն կիգա, էդա հ՝իրկուն է ու չէկավ իմ ուզածն, ի՛մալ էղավ։

Լալի ճար կտրավ, հ'ելավ զարկեց էկավ ըխտիյարի մոտ, ըսեց.—Ըխտիյար, դու ընծի բան խոսք տվիր, օր հ'իրկուն առներ հ'իդեր, իմա՞լ էղավ քու տված խոսք, իմ թաքավոր հըմըկա զիս կախել կիտա։

Ըխտիյար ըսեց.— Ես հազրեր ենք, էդ էր կառնեք կիզենք, դու պարապ էկար, դը՛ հ'ելի էրթանք։

Հ'ելան, առան զիրար էկան, գացին թաքավորի դիվան, թամանտար էզան ու կանան։

Թաքավորն հարցուց, ըսեց.—Լալա՛, զիմ հ'ուզած բերի՞ր։

Լալեն ըսեց.—Հա՛, բերի։

Թաքավորն ասեց.—Խունարդ[1] ըրե օր տեսնամ։

Ըխտիյարն բերեց չարխըմ դրեց օրթեն, հ'ինք նստավ մեջ, բուրղուն ժրեց, խուռմիշ էրեց, չարխ զթևեր ջաղցի թևերու պես բութավըռնըկեց ու բանձրցավ, հալվոր լե մեջ բանձրցավ էրկնուց երես, էլ չերևեր, հըման օր կմըժտըկեր։ Քիչմ' լե մանցին, ըստհաղ սազեց իջնալ, իջավ թաքավորի քոշկ ու սարի դուռ իջավ։

Թաքավոր էդ բան օր տեսավ, ծըծղաց։ Ասաց ըխտիյարին.—Էդ ի՞նչ էր էրիր դու, հեղըմ տեսանք բանձրցար էրկնուց երես, էլ չէրևեր, հեղըմ լե իջար, իջար նստար գետին։

Թաքավորի տղեն էտ տեխ կանուկ էր, օր ըխտիյարն հ'ելավ մտավ չարխի մեջ, հ'ելավ էրկինք ու իջավ, եբ օր էդ բան տեսավ, ուրին դուր էկավ։

Լալին ասաց.—Լալա, խնդիրք կէնիմ քու օգնեն ու ձեռնեն օր խնդրրվորիս իմ խորնե, իզին իտա, մտնիմ էդա չարխի մեջ, հ'ելնիմ ու իջնիմ, ընծի ջատ դուր էկավ։

Լալեն էկավ թաքավորին ըսեց.— Թաքավոր ապրած, քու տղեն կխնդրվորի օր ըխտիյարին ասես չարխ իտա, քիչմ' նստի մեջ, հ'ելնի էրկինք ու իջնի։

Թաքավորն ըսեց.—Թըղ էղնի, կանչեք ըխտիյարին հ'իգա իմ մոտ, ըսիմ։

Կանչին ըխտիյարին՝ էկավ։

Ըսեց.—Ըխտիյար բաբա, էդ քու չարխ տուր քիչմ' իմ տղեն նստի մեջ, հ'ելնի էրկինք ու իջնի։

Ըխտիյարն ըսավ.—Թաքավոր ապրած, բանմ' չըմ ըսեր, մինակ քու տղեն էդա բանին վարժվուկ չէ, վերջ զարար կքաշա։

Թաքավորն ըսավ.—Ջանըմ, ի՞նչ զարար տ'եղնի, տուր քիչմ' լե էնի թող ուր փափաք հ'ընցու։

---

1 Շնորհքդ (Ս. Բ.)։

Ըխտիյար էլ ձեն չհանեց, տվեց։

Հ'ելավ տղեն նստավ շարխի մեջ ու շարխի գլուխ թողուց ու բանձրցավ։ Աչք էլ չկտրեր։

Մըկա տղեն կուզա օր ուր տեխ դառնա, բայց չկոցավ շարխի գլուխ զավթ էներ։ Գնաց մեկ օտար էրկիրմ իջավ։ Իջավ ու ինքն իրեն ըսավ՝ «էս ի՞նչ բան էր էկավ գլխուս, իմ էրկիր հ'ո՛ւր, էդա տեխ հ'ուր, տարիներով հեռունին իրարուց»։

Վերուց իր շարխ ու գնաց պառվու մը դուռ զարկեց։ Պառավ հ'ելավ դուրս։ Հարցուց, ըսեց.—Զավա՛կս, ի՞նչ կուզիս։

Տղենն ըսեց.—Պառա՛վ, օտար էրկրե էկած եմ էս տեխ, ծանոթ չունիմ, օր էրթամ գիշեր մնամ տեխ, եթե կէղնի իսա, թող էդա գիշեր մնա՛մ էդա տեխ, հ'ելնիմ լուսուն էրթամ։

Պառավն ըսեց.—Բան չըմ ասի, արի, բայց հաց է, ջուր է, յորդան դոշակ չուզիս։

Տղենն պառվուն ըսեց.— Պառա՛վ, ես քեզնե բան չըմ հ'ուզի, մինակ գիշերվամ սըթար, պառկիմ, հ'ելնիմ լուսուն էրթամ։

Տղեն գնաց ներս, նստավ։ Պառավ քիչմ' խմոր էր էրեր, փետ չկեր վառեր օր խաց թխեր։

Էկավ տղին ըսեց.—Էդ քու շարխ ի՞նչ շարխ է, բեր կոտրե վառենք, թխենք հաց, ուտենք, փետ չունիմ օր վառիմ, թխիմ հաց։

Տղենն պառվուն ըսեց.—Պառավ, ի՞նչ է կըսիս, էսի օր կա՝ իմ կյանքն է, օր չէղնի, իմ կյանք խինդ փարա չէներ։ Մնացին մինչև լուսուն։ Տղեն հ'ելավ գնաց մի քիչ պտոտվավ, դառցավ էկավ, էդ օր լե մնաց պառվու տուն։

Հ'իրկուն օր էղավ, տեսավ օր իրենց տան դիմաց ճրագմ' կըվառեր։ Պառվուց հարցուց, ըսեց.—Էդա մըր դիմացի ճրագ ի՞նչ ճրագ է, օր կը վառի, ես կուզեմ էրթամ էն ճրագի մոտ ու դառնամ գամ։

Պառավն ըսեց.—Տղա, ինչո՞ւդ պետքն է, քզի հըմլա բաներու մեջ կթալիս. ո՛չ գնա, ո՛չ տես, քզի կորա բան չկա էնտեխ։

Տղի մտքեն էդ բան չգնաց։ Մնաց մինչև օր պառավ հ'ելավ գնաց, քնացավ։ Հ'ելավ նստավ ուր շարխի մեջ, գնաց էդ ճրագի մոտ իջավ։ Իջավ տեսավ օր էտտեխ ահագին ծովմ' կեր, էդ ծովու մոտն ալ մեծ քոշկ ու սարեմ կեր շինուկ, էդ քոշկի տանիս իջավ նստավ։ Զարխ թողեց էդ տեխ, ինք իջավ գնաց քոշկ, տեսավ էդ քոշկի մեջ խարիր խատ հ'օդա. էդ հ'օդեսներու մեջ պտոտվավ, բանմ' չտեսավ. էկավ վերջի հ'օդի մեջն օր կմտներ, տեսավ խորոտիկ ախչիկմ' մըջ էդ հ'օդին պառկուկ է։ Կեռավ էդ ախչկա երեսեն

պագմ՝ առավ։ Ամանմ՝ լե էփուկ կերակուլ կեր դրուկ էդ տեխ, նըստավ էդ կերակուլն էլ կերավ, թողուց հ՝ելավ դուրս, գնաց նստավ ուր չարխի մեջ, թողուց գնաց պառվու տուն։

Լուսուն էղավ, ախչիկն հ՝ելավ ուր շորեր խաղավ, տեսավ օր էփված կերակուլն ուր տեխ չէ։ Գնաց խայլու դիմաց իշքնց, տեսավ օր ուր էրեսեն պագ մի առած են։

Ասաց. «Ջանըմ, էդ ո՞ր պիտի էղնի, ո՞րն է էկի մտի իմ քոշկի մեջ, սլագեր է ղիս ու կերի իմ կերակուլ, հ՝ելի գացի»։

Էն օր մնաց, հուրմ չկոցավ հաներ ախչիկ։

Տավըրսի օր տղեն դինան հ՝ելավ, նստավ ուր չարխի մեջ, էկավ քոշկի տանիս իջավ, չարխ թողուց տանիս, իջավ գնաց քոշկ։ Գնաց էդ ախչկա քով, տեսավ օր ախչիկ խորուն քնու մեջ է։ Կեռավ ախչկա էրեսեն պագմ՝ դինան առավ, հ՝ելավ ու թողուց, գնաց։

Մնաց լուսուն։ Ախչիկ հ՝ելավ տեսավ օր նորեն ուր էրեսեն պագ մի առած են։

— Ջանըմ, էս ի՞նչ բան է, էս տեխ օտար մարթ ո՞ր պիտի դա. չէղավ, էս գիշեր պիտի մնամ արթուն, տեսինք էդ ո՞րն է կիգա էսա տեխ։

Գիշեր ախչիկ մնաց արթուն, տեսավ օր երիտասարդ տղե մի դուռ բացեց, մտավ ներս ու բարև տվեց, քաշեց աթոռք մեկ դին, նստավ։

Նստավ ու քիչմ՝ իրարու հետ ախչիկն ու տղեն խոսացին։

Ախչիկն ըսեց տղին.—Դուն ինչպե՞ս էկար էս դեխ, հավքեր մինչև անդամ կարող չեն իմ քոշկ ու սարի վրավեն հ՝ընցնին։

Տղենն կվերու կըսե.—Քու սեր բերեց ղիս։

Ախչիկն ըսեց.—Արի տողրին ասա, դուն ուրիշ ադեն էլ էկե՞ր ես էս տեխ։

Տղենն ըսեց.—Էս էղավ իրեք անգամ կուգամ էստեխ, կէրթամ, էրկու անգամ լե քու էրես պագեր եմ, դու խորուն քնի մեջ ես էղեր, հիմի ես էկեր եմ ընկեր եմ քու թոռ. դուն գիտես, կուզես ընծի վնասն, կուզես ինծի առ, ո՛ր մեկն օր կուզիս՝ էն տեսակ էրե։

Ախչիկն վերուց ըսեց.—Իմ խեր էդա քոշկ շիներ է դրեր է զիս մըջ ընե, տարին էրկու անգամ կուգա ընծի տեսնելու, եթե ես քեզի առնիմ, ժամանակին օր տղովցա, իմ խեր օր էկավ ընծի տեսնելու, կըռնա՞ս ընծի էն տեսակ խունարըմ գտնես, առնես փախչիս, օր իմ խեր ընծի չտեսնի։

Տղենն ասաց.—Խա՛, հե՛չ մի վախնար։

Առան զիրար, մնացին տարիմ՝ էդ դեխ։ Ախչիկ տղովցավ։ Հոր գալած ժամանակ մոտեցավ օր գեր ուր ախչիկ տեսներ։

Ախչիկն տղին ասաց.—Արի ընծի առ փախչիր, հորս գալած ժամանակ մոտեցեր է, չի գա ընծի տեսնի, ըսե թե՝ «էս ի՞նչ բան իս էրի»։

Տղեն հ՝ելավ, առավ ուր կնիկ, մեկ տեխ նստան չարխի մեջ ու բանձրցան գացին դաշտ մի, ախչկա ցավ բռնեց։

— Մա՛րթ,— ասաց կնիկն,—ի՞նչ կէնես, աստծուն կէնես. իշի էսա տեխ մե քիչ հանգստանաք, իմ ճժու ցավն է բռնի։

Իշան. սարիմ գլուխ նստան։

Կնիկն ասաց մարթուն.—Գնա՛, քիչմ՝ ցախ բեր վառե էնե կրակ, տաքնաք, ես ցրտու մեռա էսա դեխ։

Մարթն ըսեց.—Կնիկ, աստված զքու տուն շինե, էդա սարի գլուխ, ես հ՝ուստի՞ց բերիմ ցախ, վառիմ, դու տաքնաս։

Ըսեց.—Էդա մըր դեմ կրակմ՝ կերևա, իսկի չէ, գնա էն դեխեն քիչմ՝ կրակ առ ու արի։

Հ՝ելավ տղեն նստավ չարխի մեջ, գնաց կրակի մոտ իշավ։ Էդ տեխ լե շատ հեռու էր, գիշեր ու մութ։ Տղեն առավ կրակ, դրեց ուր չարխի մեջ, շորովմ՝ կապեց, առավ էկավ, շոր վառավ. կրակ կկանի՞ շորու մեջ. ճար կտրավ՝ հանեց ուր շորեր պըլուլեց ինե, ինչ գլխու ցավանք էնեմ, ուր բոլոր շորերը վառեց, քուն էկավ ուր վըրեն։ Կրակ ընկեր էր չարխ, մեկ թել վառեր էր։ Ոբ թել կվառի, չարխ կավիրի, կիջնի մեկ ուրիջ տեխ կնստի, տղեն լե խորուն քնու մեջ։

Լուսուն էղավ, տղեն արթավ, տեսավ օր ուր շորեր բոլոր վառեր է, չարխի մեկ թելն էլ վառեր է ու էլ չբանի, ավիրեր էր, էրեց մատեն ու նստավ, մարախից քիչ էր մանցի պատռեր իրարուց։

Ըսեց՝ «էդ ի՞նչ փորձանք էր էկավ վըր ձի, ճամբախ կուրուսի, կնիկս էլ մնաց էդ դին, սարերու գլուխ, չգիցա թե իմալ էղավ, իմալ չէղավ, չարխս լե ավիրվավ, մանցի էսա տեխ»։

Ինքն ուրին քիչմ՝ գանգատ էրեց, դառցավ ջուքր տվեց աստծուն, գոհությունն տիրոջ՝ «Բալքիմ իմ ճակատս էսա գրվեր էր, կատարվեցավ։ Հորս տնեն զրկվա, կնկաս մոտեն զրկվա, ու մանցի անտեր ու անտիրական՝ էսա սարերու գլխներ։ Ճար մնաց աստված։ Հ՝ելնիմ էրթամ ջուխտմ՝ էրկրթե սոլ տամ շինել, հագնիմ պտոտվիմ, քանի չծակվեր է՝ շուռ հ՝իգամ աշխարք՝ բալքիմ իմ կնիկ գտնիմ»։

Հ՝ելավ գնաց ջուխտըմ էրկրթե սոլ ուրին տվեց շինել, հագավ

ու ընկավ ճամբախ։ Ըսեց՝ «Կանի, ժամանակմ՝ լե պտոտվելով հ՚ընցում տեսնեմ ի՞նչպես կէղնի»։

Տղեն թըղ էրթա ուր ճամբու հետ, մենք դառնանք ախչկա վրա։

Ախչիկն է, կիշե օր իրիկ գնաց ու չէկավ. էդ գիշեր էդ տեխ կպառկի, տղեմ կբերե։ Լուսուն հովիվ կիդա էդ տեխրանք ուր օչխըրներ կարծեցու։ Հ՚ետևանց կտեսնա բանմ՝ կսատրկա, դան կէնե թե բաղրկնից է հ՚ընկի, կելնի կիգա օր առնե էրթա։ Կիգա կտեսնա օր խորոտիկ կնիկըմ էդ տեխ պառկած է, էրեխեմ էլ պըլուլուկ ուր շորերու մեջ դրուկ է կշտի հետ։

Կհարցու կնկա մոտեն, թե.—Քուրիկ, ի՞մալ է էղի օր դու էկեր իս էդա տեխ պառկի, աճայեպ քզի տեր ու տիրական չկա՞։

Կնիկն կըսե.—Ախբեր, իմ ցավեր մի տա իրար, փորձանքիմ՝ ռաստ էկա, էկա էդա տեխ պառկա։

Հովիվն ըսեց.—Քու ցավն ի՞նչ է, հեղըմ ըսե տեսնամ։

Կնիկն ըսեց.—Ես ու իմ իրիկ հ՚ելանք էկանք էսա տեխ. էղավ օր իմ ճժու ցավ բռնեց, մըրսա, ասի իմ իրկան, հ՚ելի գնա քիչմ՝ կրակ բի, տաքնամ։ Իմ իրիկն հ՚ելավ գնաց ու չէկավ, էլ չըմ գինա ի՞նչպես էղավ, ի՞նչպես չէղավ, ես լե անտեր ու անտիրական, խեղճ ու թշվառ, ընկա էդա սարի գլուխ մանցի։—Դառցավ հովվին ասաց էդ կնիկ.—Հովիվ ախբեր, իմ հետ փարա շատ կա, էկո տար զիս էրե քըղի քուր, թե օր իմ տեր էկավ գտավ զիս՝ աղեկ, թե օր չդըտավ՝ ես ու դու հդիրաց կապրինք, մինչև մեռնելու ժամանակ։

Հովիվն ըսեց.—Դու օր կըսես, ես ի՞նչ պիտի ըսիմ։

Վերուց զկնկա խուրճին թալեց ուր թևի վրեն, էրեխեն զարկեց սրտին ու առավ զկնիկ, գնաց ուր տուն։

Կտանե տուն, մոր կըսե.—Նանե՛, հ՚ելի, քըղի ախչիկմ իմ բերի, հ՚ելի քիչմ՝ կերակուլ էփե ուտե, իմ քուր հըմկա անոթից մեռավ։

Հովիվն ու ուր մեր օր էդ խուրճի օսկին տեսան, էղան աշխըրքով, էկուր տես օր պատիվ է կընին էդ տղի կնկան։ Ուրախութեն մ՚է բռնի զիրենք օր էն խըդար կէղնի։

Շնորհակալ էղան աստծուց օր էդ կնիկ ուրանց ռաստ էր բերի։

Հովիվ հովվութենի թարկ տվեց, էլ չգնաց հովվութենի հ՚ետեվեն։

Օրըմ հ՚իրկուն պառկավ քնացավ, լուսուն հ՚անգահ հ՚ելավ վեր, օչխարի տիրվըտանք, ամեն մեկ ուր օչխար առավ էկավ, տեսան օր հովիվ չէկեր է. շատ համբերեցին, տեսան օր հովիվ հ՚անգահցավ. գացին հովվի տուն, ըսեցին.—Ախբեր, էդ ի՞նչ է կէնիս դուն.

կեսօր էղավ՝ հալա պառկուկ ես, չըս հ՚իգա մըր օշխըրներ տանի արծեցու։

Հովիվն ըսեց.—Ախբեր, ես էլ հովվութեն չըմ էնի, գացեք ձըզի հովիվ գտեք, էդա քսան տարի է հովվութեն կէնիմ շատ խերմ՚ տեսա, մնաց հիմի՞։

Օշխըրի տերեր ըսին.—Ջանըմ, էդա ամսուն ղաթի քու խավլ կխըլըսի, մանցեր է էրկու օր, էկո էդա էրկու օր լե խզմաթ էրե, էլ մ՚է՚նի։

Սորա հովիվն ըսեց.—էն էրկու օր լե թըղ էղնի ձղի, էն հախ լե, ես հովվութեն չըմ էնի։

Օշխրի տերեր թողին, դառցան էկան ուրանց ուրիշ հովիվ բըռնին։

Մանցին շաբաթըմ էրկուս. կնիկն օր հ՚ելավ ուր մեչք կապեց, հովվին ըսեց.—Ախբեր, իմ հետ փարա շատ կա, նստինք ուտենք կխըլըսի, էկո ընծի անկաճ էրե քոշկ ու սարեմ շինեք՝ նստինք մեշ։

Հովիվն ըսեց.—Շատ աղեկ կըսիս, քու խոսք շատ ճիշտ է։

Հ՚ելավ գնաց քանիմ՚ հատ բընա-իրկատ գտավ առավ էկավ, բազար էնեց, հախ ուրանց տվեց, քոշկ շինեցին։ Եր քոշկ շինեցին խըլըսան, բաղչեմ լե տվեց քոշկի հ՚առեջ շինել։

Ժամանակըմ վերջ, էդ կնկա էրեխեն օր քիչմ՚ փորքեր էր՝ իջեր էր բաղչեն կպտոտվեր։ Ճիշտ էդ վախտ էդ էրկրի թաքավորն ու լալեն հալվափոխված են, հ՚ելած են կօլըրտեն։ էկան էդ բաղչի մոտեն կընցնեն՝ տղեն տեսան։

Թաքավորն լալին ըսեց.—Լալա՛, չըս կըռնա՞ էդա խորոտիկ տղեն գողնաս, առնիք հետ մի էրթանք։

Լալեն ըսեց—Ինչո՞ւ չէ։

Գնաց գողտուտիկ, թե շաքրով, թե փարով խաբեց ղտղեն, առավ էկավ։ Առան հետ ուրանց գացին։

Թաքավոր տարավ էդ տղեն, պահեց մինչև օր ջոջցավ։

Հովվի քուրն է իրկուն իշկեց, տեսավ օր ուր տղեն տուն չէկավ, ընկավ քախքի մեջ հ՚ուր օր փնտռեց, չկառցավ գտավ. մեկ լե ինքն ուրին սիրտ տվեց, ըսեց՝ «Իմ ձեռք ի՞նչ կա, աստված տվեր էր, տարավ, ուրին դժար թող գաց»։

Թաքավորն է, էդ տղեն պահեց, ջոջցուց, խելք էկավ վրեն։ Ավուրմ՚ մեկ տեսավ օր ձեն ու ձունմ՚ կիգա դրսեն։ Լալին ըսեց.

— Լալա՛, մեկ մը իշքե տես, էդ ի՞նչ բոռալու կանչելու ձեն է կիգա դրսեն։

Լալեն ըսեց.—Մի՞թե դուն չես գիտեր, օր դուրս անուշ բան ա, ամեն մարթ ինե համար կդանե դանվի, քեֆ ուրախութեն կէնե։

Տղեն կըսե.—Լալա, մինչև էսա վախտ էկեր իմ հասեր իմ, դուս չըմ հ'ելերի, չըմ դինա ի՛նչ տեսակ բան ա, օր էնպես է, էսօր ընձի տար դուս, քիչմ' պտոտվինք,—տղեն ըսեց լալին։

Էդ խոսաց վրան, լալեն հ'ելավ գնաց թաքավորի մոտ, ասաց.—Թաքավոր ապրած, քու տղեն կուզա օր մե քիչ հ'ելնի դուս պտոտվի, շատ կփափաքի դուս հ'ելնելուն, եթե կարելի է հրաման տուր էթանք մե քիչ պտոտվինք։

Թաքավորն ըսեց.—Հա՛, բան չկա, գնա առ էրկու ձի, նստեք, դացեք։

Լալեն գնաց առավ էրկու ձի էկավ. մեկ ինք խեծավ, մեկն ալ տղան, ու էրկուք մեկ դեխ գացին խովվի շինած քոշկու սարի մոտ պտոտվելու։

Հովվի քուր փանջարեն նստած էր. եբ էդ տղի աչքն առավ հովվի քուր, խելք գնաց, փրթավ ընկավ ձիուց ցած։

Լալեն իջավ ձիուց ցած, խելք բերեց գլուխ, վեր վերցուց։ Ըսեց.—Տղա՛, ի՞նչ էղավ քեզի, դու մինչև հիմա խելացի, ձիու վրեն նստած էր։

Տղեն պատմեց թե.—Էդա փանջարեց խորոտիկ կնիկմ' տեսա, էդոր համար խելքս գնաց, ընկա ձիուց ցած։

Հ'ելան, մեկ լե ձիանք հեծան, պտոտվելով դառցան գացին թաքավորի տուն։ Օր դառցան գացին ետ, լալեն գնաց թաքավորին ըսեց թե.—Թաքավոր ապրած, էսա քու զավակ կարգվել կուզե, պետք է կարգես։

Թաքավոր ըսեց.—Ըպա օր դու փորձեր ես, գինաս կուզե կարգվել, կարգինք գնա, ուրեն հարցուր, տես ուր սիրտ ո՛րն օր կուզե, վերն օր կփափաքի, էրթամ էն ախչիկ հ'ուզեմ իրեն։

Լալեն էկավ տղին ասաց թե.—Տղա՛, դու ո՞ր ախչիկ կուզես առնիս։

Տղեն ասեց.— Էն հովվի փանջարի կնիկն օր տեսա ու փրթա ձիուց ընկա ցած, ես կուզեմ զէն առնեմ։

Լալեն հ'ելավ գնաց թաքավորին ըսեց թե.—Քու տղեն էսա չեչիտ կասա, հ'ընցած օր գացեր ենք պտոտվելու, խորոտիկ կնիկմ' տեսավ Ֆըլան հովվի փանջարեն նստուկ, խելք գնաց, փրթավ ձիուց ընկավ ցած, ես զաթի վըր էտորն էր ասի քու տղեն կարգվել կուզե, կըսե՝ «Զէ՞նի կառնիմ»։

Թաքավոր հ'ելավ ջուհաբ ճամբեց խովվին թե՝ «Քու տուն իմ

տղեն կնիկմ է տեսի, քու քուրն է, չըմ գինա, քու ախչիկն է, չըմ գինա, պետք է իտաս իմ տղինն»։

Խովիվ կըսե.—Ես խոսք չըմ կռնա իտա, կանի էրթամ հարցում իմ քուրոջ մոտեն, թե օր ինք կամք տվեց, ես կարող չիմ խոսամ։

Կէրթա քուրոջ կըսե թե.—Թաքավոր ջուհաբ ճամբեր է ղբղի կուզե ուր տղին, թե օր քու սիրտ հազ կէնե, կէրթաս կառնիս, ես լե կէրթամ խոսք կիտամ, թը չէ, քանի սաղ իս, իմ քուրն ես, ես լե քու ախբեր, մանցի իմ մոտ։

Հովվի քուր քիչմ՝ մտածեց՝ «Կէղնի, չէղնի»։ Ըսեց.— Ախբեր, նստելով էլ չէղնի, բալքիմ էդ բան աստծուց է, գնա խոսք տուր՝ թըղ գան հ՝ուզին առնին, էրթան։

Հովիվ հ՝ելավ գնաց, լալին ըսեց.— Էկեք հ՝ուզեք, կըսե կառնիմ, օր ինք կառնե, ես ի՞նչ կառնամ ասիմ։

Հ՝ելան, էկան հ՝ուզեցին, առան գացին։ Յոթ օր, յոթ գիշեր գոլ ու զուռնեն զարկին, քեֆ ուրախութեն էրին։

Յոթն օր օր թըմավ, ախչիկ խնդրվավ օր քանիմ՝ օր լե էրկընցուն զուր հարսնիք, ինք բանի բաքլամիշ ունի։

Թաքավոր կըսե.—Հայդե, իմ հարսի խոսք մը կոտրեք, քանիմ՝ օր լե գոլ ու զուռնեն թըղ զարկե, քեֆ ուրախութեն էնեն։

Վըր յոթն ավուր կիշքեն օր աշըղըմ էկեր է նստեր է վըր թաքավորի քոշկի դռան քարին ու սազ կղարկե։

Կէրթան թաքավորին կըսին.— Թաքավոր ապրած, հ՝ըմեն, հ՝ըմեն հարսնիք է, աղեկ աշըղըմ էկեր է նստի դուռ, սազ կղարկե, հրաման էնիս էրթանք առնինք հ՝իգանք քիչմ՝ քեֆ, ուրախութեն էնինք։

Թաքավոր ըսավ.—Հրաման է։

Օր ասեց հրաման է, գացին առան զաշըղն ու էկան աթոռ դրին, նստավ վըր աթոռքին։

Թաքավորն ըսեց.— Աշը՞ղ, քու տամբուրի ձեն քիչմ՝ հանե տեսնանք։

Աշըղ առավ զտամբուրեն ձեռք, քիչըմ տընկտընկցուց։

Թաքավորն ըսեց.— Հերիք է, տամբուրեդ դիր ցած, քիչմ՝ լե պզտիկ մժուլեմ, մասալեմ խըսա էրե, անկաճ էնենք։

Աշըղն ըսեց.—Թաքավոր ապրած, էդա չափ բազմության մեջ ես ի՞նչպես մասալ ասեմ, օր հասկցում քղի, ամեն ձորեն ձեմը կելնի։ Հ՝ելի էրթանք թանա հ՝օդեմ պատմիմ, օր հասկնաս թե ի՞նչ է կասիմ։

Հ'ելան առան զիրար, գացին հարսի փարդի եռև նստան։ Աշը-ղըն սկսեց իր գլխու գալած նազլ էնել։

Ըսեց.—Թաքավոր ապրած, վախտին մեկ թաքավորմ' կէղնի, Լդոր երես ծաղր չելնի, օր մը լալին վրեն կդնե օր, էրթա ուրին բան մը բերե, տեսնելու պես ծրծղա. լալեն կէրթա չարխմ' կբերե, էդ թաքավոր կտեսնա կծրծղա, սորա, էտոր տղեն կելնի կմտնի էդ չարխի մեջ, կբարձրնա, կուգա քաղաքմ' կելնի դուրս. օր մը լե էդ քաղքի դեմ կրակ մը կտեսնա էդ տղեն, կնստի ուր չարխի մեջ կէր-թա քոշկի մը վրեն կիջնի, էդ քոշկի մեջ ախչիկըմ կէղնի, կելնի զէդ ախչիկ կառնե. էդ ախչիկ օր կճժովնա, կառնեն զիրար կփախ-նին, կէրթան սարում գլուխ, էնտեխ ցուրտ կէղնի, տղեն օր կէրթա կնկան կրակ բերե, կէրթա ու չի գա, չարխ կվառի, կկորցուն զի-րար։

Տղեն է, օր ուր գլխու գալած կպատմե, հարս կհասկնա, փար-դի հ'ետևեն ձեռքով զփարդեն կթախթրե, աշըղ կտեսնա, կըսե.— Թաքավոր ապրած, տե՛ս քու հարս ձեռքով ի՞նչ հաշարաթ է կէնե։

Թաքավոր կըսե.—Ինչ օր կըսե, թըղ՝ գա ներս, հրաման է։

Հարսն էլ կուգա կնստի ուր գլխու գալած կպատմե թե.—Հմլա պառկա, հովիվ առավ զիս էկավ էրեց ուրին քուր, իմ տղեն հմլա գողցան տարան։

Հարսն օր էդ պատմութեն կէնե, թաքավոր կհասկնա օր էդի ուր տղեն ու հարսն են. էդ տղեն լե օր էրեր է ուրին հոգեկան տղա, ու զէդ հարս բերեր է, ուր թոռն է, կուրախնան։ Կելնի, կբռնե էրկու-սի ճակատ լե կպագնե։

Կըսե.— Ըպա դուք չըսիք, թե իմ հարսն ու իմ տղեն իք դուք։

Նոր կբռնե հարսնիք։ Յոթն օր, յոթ գիշեր գոլ ու զուռնեն կը-ղարկե, քեֆ ուրախութեն կէնեն։

Ընտոնք հասան իրենց սրտի մուրազին, դուք լե հասնիք ձըր սրտի մուրազին։

Աստծուց իշավ իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ ջաղամաթին։